Texte **ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ** (Երվանդ Օտյան - 1869-1926)

Հնդկաստանի առաջին գիշերս շատ հաճելի չանցավ: Պանդոկապետը, որ հետս բարեկամացել էր, տվեց մի քանի խրատներ, որոնք բավական մտահոգեցին ինձ:
- Քնելուց առաջ, լավ փակեցե՛ք պատուհանի փեղկերը, քանի որ տաքության պատճառով ստիպված եք ապակիները բաց թողնել:
- Իսկ ինչո՞ւ պետք է փեղկերը փակեմ:
- Որովհետև գիշերը ագռավները կարող են սենյակ մտնել ու ամեն ինչ տակն ու վրա անել: Նույնիսկ կարող են ձեր գուլպաները, փողկապը, թաշկինակները, թևի կոճակները և այլն գողանալ: Իսկ եթե ծանր քուն ունեք՝ կարող են նույնիսկ ձեր դեմքը կծել:
Մտածեցի՝ ուրեմն լավ է ասում առածը. – Ագռավը կերակրի՛ր, որպեսզի աչքդ հանի:
- Եթե պատի միջից ձայներ լսեք, խուճապի մի՛ մատնվեք -, շարունակեց պանդոկապետը:
- Ի՞նչ են այդ ձայները:
- Մկների աղմուկն է պարզապես:
- Սենյակ չե՞ն մտնում:
- Այդ բանը շատ չեն համարձակվի, եթե լույսը վառած պահեք:
- Ուրեմն այդպես կանեմ:
- Իսկ եթե երբեք տեսնեք մի մուկ, որ սենյակի մեջ այս կամ այն կողմ է վազում, չփորձե՛ք իջնել անկողնուց այն հալածելու համար: Անմիջապես կանչեցե՛ք սպասավորը: Նա հատուկ դեղեր ունի, որ իսկույն կթափի մկան վրա:
- Բայց ինչո՞ւ բավական կատու չունեք այդ մկներին բնաջնջելու համար:
- Նախ՝ այստեղի մկներն այնքան մեծ են, որ կատուներից չեն վախենում և կարող են դիմադրել նրանց: Ուրեմն կատվի փոխարեն մուկ բռնող շներ ենք օգտագործում: Բայց այնքան մեծ քանակությամբ մկներ կան, որ շների մի ամբողջ բանակ չէր բավականացնի նրանց բնաջնջելու համար:
- Ուրիշ տեղեկություններ էլ ունե՞ք տալու:
- Անշուշտ. բացի մկներից... դժբախտաբար, շատ կարիճներ կան:
- Թունավո՞ր:
- Անշուշտ, կարիճը միշտ թունավոր է և շատ վտանգավոր, եթե խայթի: Միայն, քնած տեղդ քեզ ոչինչ չի անի: Նույնիսկ կարող է դեմքիդ վրայով քայլել՝ առանց վնասելու: Իսկ եթե ձեռք տաս, անմիջապես կխայթի:
- Իսկ օձեր չկա՞ն:
- Շատ: Բայց նրանք կարևորություն չունեն... Եթե գիշերը պարտեզ դուրս չգաք ման գալու՝ օձերից չվախենա՛ք, որովհետև նրանք միշտ դուրսն են մնում և շատ քիչ առիթներ ունենք սենյակների մեջ օձ տեսնելու... Ուրեմն առայժմ գիշեր բարի, պարոն, հանգիստ քուն եմ մաղթում: Հավանական է, որ շատ հոգնած եք: